## ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՈԴԻ.

Ի 27 Փետրվարի 1882 ամի· Որովհետեւ Պօղոս քահանայն Եաղուբի դեղջ անհաւատարիմ գտեալ ի գործակալական պաշտօնավարութեան իւրում զաղեալ է զ175 րուբլի անթռակալական արդիւնս եւ ի բազում դէպս ցուցեալ է քահանայական կոչման իւրում զանվայել ընթացս, վասնորոյ Ս· Սինոդն Հրամայեաց գանձել ի նմանէ ըստ օրինաց զկրկնապատիկն զաղեալ դրամոց եւ ի սոսա, ի խրատ եւ ի զգուշութիւն այլոց քահանայից առաքել զնա յապաշխարութիւն ի վանս Ղփչաղու հաւանեալ ժամանակաւ' յետս առնլով ի նմանէ զՀայրապետական պարգեւս եւ զկոնդակս, եթէ ունիցի:

Ի 27 Փետրվարի 1882 ամի· Որովհետեւ Տփխիսեցի Մարտիրոս քահանայն Ամիրխանեանց զկնակիցն Սալլու դեղջ Ապարանու զՅարութիւնն Շահրազեան Գրիգորեանց ցուցեալ է իբրեւ ընկել Տփխիսեցի եւ ամուսնացուցեալ է ընդ Տփխիսեցի Մարգարտի Յակոբեան Շահնազարեանց ի Տփխիս քաղաքի անդ ի 1875 ամի: Եւ Ստեփաննոս քահանայն Խաչատրեան Սալլու դեղջ զնոյն Յարութիւնն Գրիգորեանց իբրեւ ծխական ժողովուրդ իւր եւ իբրեւ անտեղեակ զամուսնութենէ նորին կրկին ամուսնացուցեալ է ի հայրենի դեղջ իւրում, ի 1879 ամի ընդ Սալլուեցի Մրճիկի Մանուկեան, վասն որոյ Ս· Սինոդն Հրամայեաց առնուլ զփիլոնն ի Մարտիրոս քահանայէ Ամիրխանեանց, զժողովուրդն յանձնել այլում քահանայի եւ առաքել զնա ի վանս Թեղենեաց յապաշխարութիւն յանցանացն պահօք եւ աղօթիւք· նոյնպէս եւ ի Ստեփաննոս քահանայէ Խաչատրեան առնուլ զփիլոնն, զժողովուրդն յանձնել այլում քահանայի եւ զնա առաքել ի Մուղնի վանս վասն ապաշխարութեան: Իսկ զապօրինի զպսակն Սալլուեցի Յարութիւնի Գրիգորեանց ընդ համայնակցուհւոյ իւրում Մրճիկի Մանուկեան առ կենդանութեամբ առաջին կնոջն համարել անվաւեր:

Ի 7 Ապրիլի 1882 ամի· Որովհետեւ Երեսփոխանն Ս· Լուսաւորիչ Եկեղեցւոյն Գանձակու Յովսէփ Եսայեանցն ծախեալ է զամբողջ եկեղեցապատկան զումարս թէեւ հրաւիրով ժողովրդականաց, բայց հակառակ տնօրէնութեան Սինոդի, որոյ վասն հարկ էր ենթարկել զնա ընդ պատասխանատուութեամբ, սակայն յայս նուագ ի թախանձանս նորա եւ ի յարգանս բազմամեայ եւ օգտաւէտ ծառայութեան նորա վասն եկեղեցւոյն, դադարեցուցանել զպահանջ ի նմանէ եկեղեցապատկան դրամոց· սաստիկ ազդելով նմա ի զգուշութիւն յայս առաջին նուագ, եւ նոյնպէս ամենայն երեցփոխանաց, զի մի վստահացին միւս անգամ հակառակ տնօրէնութեան Ծայրագոյն Հոգեւոր Իշխանութեան ըստ հաճոյից կամաց իւրեանց ի գործ դնել զգումարս եկեղեցեաց, երկնչելով յապագայ խստագոյն պատասխանատուութենէ:

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի Վ.Ա.Ղ.ԱՐՇԱՊԱՏ.